ի վերջանալ նոյնոյ ամին, վերջանայ և առաջին տողն ի տասն ինն տարին. յայնժամ պարտիս վերադառնալ ի սկիզբն երկրորդ տողին, յորում գտանես զթուականդ՝ հազար երեք հարիւր յիսուն վեց. և հանդէպ նորին յառաջին տուփն զտարեգիրն (Բ). և ի վերն ուղղակի, զվերադիրն (ԻԼ): Եւ զնոյն խրատն (որ վասն առաջնոյ տողին ասացաւ) պահեա և յայսմ տողում, և ի յերրորդ և ի չորրորդ և յայլ ամենայն տողսն մինչև ի վերջն: Այսպէս կարգաւ ի հասանիլն ի չորրորդ երեսի վերջին տողն, յորում է թուականն հազար ութն հարիւր յիսուն, և ի նորին վերջին տուփն՝ յորում է տարեգիրն (Վ) յորում և թուականն լինի հազար ութ հարիւր վաթսուն և ութ: լրանայ շրջանն հինգ հարիւրեկին. որ է հինգ հարիւր երեսուն երկու ամ: Զի չորս երես աղիւսակքդ ունին զքսան ութ տողս. և իւրաքանչիւր տող՝ տեէ ի տասն և ինն տարիս, ըստ թուոյ տասն ինն վերադրացն Հոսմայեցւոց. և տասն ինն անգամ քսան ութն, կամ քսան ութ անգամ տասն ինն է հինգ հարիւր երեսուն երկու, որ է շրջան մի: Վասն այսորիկ և հարկաւորի աստէն վերադառնալ ի նոյն առաջին սկզբան տողն ըստ կանոնի շրջանին. և սկսանիլ վերստին. յորում լինի թուականդ, հազար ութ հարիւր վաթսուն և ինն, և հանդէպ նորին յառաջին տուփն եղեալ՝ տարեգիրն (ՓԻ), և ի վերին վերադիրն (ԻԼ), ըստ առաջին կարգին. զի միայն զթուականն փոխել պարտիս և նման առաջնոյն կարգաւ ընթանալ: Զայս շրջանս ևս վասն այսորիկ եղաք ընդ տօնացուցիս, զի առ ձեռն ունելով զթուական տարւոյն, ի ձեռն նորին գտանիցես զգիր տարւոյն. և ապա ի յերկրորդ հատորջն գտեալ զխորան նոյնոյ գրոյն՝ ընթանայցեո ըստ ցուցման նորին անաշխատ և մշտնջենապէս: Յորում թէպէտ վերագիր ոչ էր այնքան հարկաւոր որքան առ գիրքս

այս բայց վասն յարմար բերելոյն զըջանն, եղաք: Իսկ
 եօթներեակքն եղեալք են ի խորան տարեգրացն ընդ զրոցն:
 Այլ և՛ կամեցաք թէպէտ զնոր տօմարին մերոյ զվերադիր
 և զեօթներեակն ևս զնեղ՝ սակայն՝ վասն անընտել զոլոյն՝
 մի՛ զուցէ զշփոթումն ինչ բերցէ և զտեղի տայցէ տարա-
 կուսանաց. վասն որոյ աստանօր զանց արարաք:



Թուական Հայոց:	Վերին մէկ շարն՝ են վերադիր իսկ ստորին՝ արեգիրք:							
	ԻԸ	Թ	Ի	Բ	ԺԲ	ԻԳ	Ե	ԺԵ
այլէ	փԼ	ճ	ի	տ	ՀԿ	է	Ջ	Լ
այճզ	Ը	ոՂ	Ը	ռ	մ	դ	13 ո	14 հ
այհե	26 ս	27 յ	28 խ	29 ր	30 ձ	31 թ	32 սո	33 խ
այղղ	45 ց	46 ղ	47 ժ	48 վս	49 յ	50 զ	51 պ	52 ղձ
անժզ	64 տվ	65 ն	է	Ջ	ճզ	ժ	չ	կ
անլբ	փ	մճ	ի	տ	հ	ըէ	Ջ	Լ
անծա	Ը	ո	թԸ	ռ	մ	է	չո	հ
անհ	ս	յ	խ	ցր	ձ	թ	ս	ծխ
անձթ	ւց	դ	ժ	վ	նյ	զ	պ	ղ
աչը	տ	չն	է	Ջ	ճ	իժ	չ	կ
աշիէ	փ	մ	լի	տ	հ	ը	ոջ	Լ
աշխզ	Ը	ո	թ	սո	մ	է	չ	ձհ
աշկե	վս	յ	խ	պ	ղձ	թ	ս	ծ
աշձզ	Լ	ճզ	ժ	վ	կ	էզ	պ	ղ

Վերին մէկ շարն՝ են վերադիրք:
իսկ usnrhnn՝ sarrbqhrf:

ԻԶ	Ը	ԺԹ		ԺԱ	ԻԲ	Գ	ԺԴ	ԻԵ	Զ	ԺԷ
ԿԳ	Չ	Կ	ռ	ՄՃ	Ի	ո	Տ	ԸԷ	Չ	Լ
¹⁵ ւ	¹⁶ յմ	¹⁷ Լ	¹⁸ ր	¹⁹ ձ	²⁰ թը	²¹ ռ	²² խ	²³ ե	²⁴ չո	²⁵ հ
³⁴ ե	³⁵ չ	³⁶ ԺԹ	³⁷ ս	³⁸ յ	³⁹ ղ	⁴⁰ պչ	⁴¹ ձ	⁴² բ	⁴³ ն	⁴⁴ ծխ
⁵³ բ	⁵⁴ ն	⁵⁵ ծ	⁵⁶ ւց	⁵⁷ ղ	⁵⁸ ժ	⁵⁹ վ	⁶⁰ կծ	⁶¹ ղ	⁶² պ	⁶³ ի
էզ	պ	ի	ս	չն	է	Չ	ճ	ԿԳ	Չ	Կ
դ	ոչ	Կ	ռ	Մ	լի	ո	Տ	Ը	ոչ	Լ
ս	յ	խլ	ր	ձ	թ	սռ	խ	ե	չ	ձհ
ե	չ	ժ	վս	յ	ղ	պ	ղձ	բ	ն	ծ
դբ	ն	ծ	ւ	ճղ	ժ	վ	Կ	էզ	պ	ի
է	Չպ	ի	ս	Տ	ԸԷ	Չ	ճ	Կ	ոչ	Կ
դ	ո	հկ	ռ	Մ	ե	չո	Տ	Ը	յ	խլ
ս	յ	խ	ցը	ձ	թ	ս	ծխ	ե	չ	ժ
զե	չ	ժ	վ	նյ	ղ	պ	ղ	դբ	ն	ծ
դ	չն	ծ	ւ	ճ	իժ	վ	Կ	է	Չպ	ի

Թուական
Հայոց:

Վերին մէկ շարն՝ վերադիրք:
իսկ usnrhnn՝ sarrbqhrf:

	ԻԸ	Թ	Ի	Բ	ԺԲ	ԻԳ	Ե	ԺԵ
ռոզ	ս	Չ	ԸԷ	Չ	ճ	Կ	ոչ	Կ
ռոիբ	փ	Մ	Լ	րս	Տ	Ը	ռ	խլ
ռոխս	ցը	ո	թ	ս	յմ	ե	չ	ձ
ռոկ	վ	նյ	խ	պ	ղ	ժթ	ս	ծ
ռոհթ	ւ	ճ	իժ	վ	Կ	է	Չպ	ղ
ռոզը	ս	Չ	Ը	ոչ	ճ	Կ	ո	հկ
ռչժէ	քփ	Մ	Լ	ր	ձհ	Ը	ռ	խ
ռչլղ	ց	չո	թ	ս	յ	ղե	չ	ձ
ռչծե	վ	ն	ծխ	պ	ղ	ժ	վս	ծ
ռչհղ	ւ	ճ	ի	սվ	Կ	է	Չ	ճղ
ռչղդ	րս	Չ	Ը	ռ	ՄՃ	Կ	ո	Տ
ռպժբ	ս	յմ	Լ	ր	ձ	թը	ռ	խ
ռպլս	ց	ղ	ժթ	ս	յ	ղ	պչ	ձ
ռպծ	վ	ն	է	Չպ	ղ	ժ	Չ	կծ

Վերին մէկ շարն են վերադիւրս:										
իսկ ստորինն շարեզիւրս:										
Իջ	Ը	ԺԹ		ԺԱ	ԻԲ	Գ	ԺԴ	ԻԵ	Չ	ԺԷ
է	մ	լի	տ	հ	ը	ռջ	ճ	դ	ն	հի
դ	ն	թ	սու	մ	ե	չ	ձհ	ը	յ	խ
բա	յ	խ	ց	դձ	թ	ս	ծ	դե	չ	ժ
դ	պչ	ժ	վ	ն	էդ	պ	դ	դ	չն	ծ
դ	չ	կծ	ւ	ճ	ի	տվ	կ	է	ջ	լի
է	մ	լ	բտ	հ	ը	ռ	մճ	դ	ն	հ
եդ	ն	թ	ս	յմ	ե	չ	ձ	թը	յ	խ
բ	նյ	խ	ց	դ	ժթ	ս	ծ	դ	պչ	ժ
դ	պ	իժ	վ	ն	է	ջպ	դ	դ	չ	կծ
դ	չ	կ	վւ	ճ	ի	ն	հի	է	ջ	լ
ըէ	մ	լ	բ	ձհ	ը	ռ	խ	եդ	ն	հ
ե	չո	թ	ս	յ	դե	չ	ձ	բ	նյ	խ
բ	ն	ծխ	ց	դ	ժ	վս	ծ	դ	պ	իժ
դ	պ	ի	տվ	ն	է	ջ	ճդ	դ	չ	կ

ԺԱՄԱՄՈՒՏՔ

ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱՒՈՒՐՑ ՊԱՀՈՑ ԵՒ ՏՕՆԻՑ ՏԵՐՈՒՆԱԿԱՆԱՅ
ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ

Պահոց երկուսքաք. երեքաքաք:

Որ ի Հօրէ առաքեցար Փրկիչ և մարմնացար ի սրբոյ կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր և լուսաւորեցեր զտիեզերս:

Հինգաքաք:

Չխաղաղութիւն քո տուր մեզ Տէր որ խաղաղութեանց ես թաղաւոր. զխաղաղութիւն և զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարգասեր:

Զոտեքաքաք. ուրքաք:

Որ ըստ ամենայնի զմիտս անցանես. զխաղաղութիւն քո Աստուած տուր մեզ հանապաղ՝ զքեզ աղաչեմք:

Կիրակէի:

Միածին Որդի և Բանդ Աստուած և անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանայ ի սրբուհոյ Աստուածածնէն և ի միշտ կուսէն. անփոփոխելիզ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած մեր. մահուամբ զմահ կոխեցեր. մինզ ի սրբոյ Երրորդութենէզ՝ փառաւորակից ընդ Հօր և սրբոյ Հոգւոյն՝ կեցո՞ զմեզ:

Ծննդեան:

Աստուածածին անհարսնացեալ՝ զբանն անսկիզբն յղացար և զԱստուածն անիմանալի ծնար. զանպարագրելին ի զիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Ծննդեան:

Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի՛ ուր քերովբէքն բազմաչեայք և աթոռք հրանիւթք և վեցթեան սերովբէքն նայիլ ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս զանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր. և ծնար որպէս զմարդ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ ի քէն զանձառ զբանն ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց:

Ծննդեան:

Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին. բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ և սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն դոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անձառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա՛ կեցուցանել զանձինս մեր:

Տեառն ընդ առաջի:

Ծերունին այսօր Սիմէօն՝ հոգւոյն զայր ի տաճարն՝ երևելով քերովբէիցն վեհագոյն. զի որոց թեօքն սաւառնեալ ոչ իշխէին նայիլ ի յահեղ փառացն, սա ի զիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս և զգուէր որպէս զմանուկ. և աղերսելով հայցէր արձակիլ ի խաղաղութիւն:

Տեառն ընդ առաջի:

Անսկզբնական բանդ Աստուած. ի վերջին աւուրս յանձն առեր լինիլ մարդ ի կուսէն. և արարիչդ յաւիտե-

նից՝ փակեցար ընդ ժամանակաւ. սուրբ Տէր սրբութեանց և անկարօտ մաքրութեանց. եկիր ի տաճարն քառասնօրեայ, զօրինացն կատարեցեր զարդարութիւն: Զոր բարձեալ Սիմէօնի զանպարագրելիդ ի զիրկս իւր հայցէր, որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա՛ զիս ի խաղաղութիւն: Վասն որոյ՝ ընդ ծերունւոյն Սիմէօնի վերագոչեմք առ քեզ Տէր, սուրբ՝ սուրբ՝ սուրբ Տէր զօրութեանց, լի են երեկինք և երկիր փառօք քովք ի փրկութիւն մեզ Քրիստոս Աստուած փառք քեզ:

Ղազարու:

Ղազարու ննջումն՝ որպէս կանխագէտ յառաջ ստէիր. որ և ի Բեթանիա յառաջէիր՝ զի յարօսցես զսիրելին քո: Արդ՝ և մեք զոչելով ասեմք, օրհնեալ որ դաս ի չարչարանս կամաւ Հօր ի փրկութիւն անձանց մերոց:

Ղազարու:

Յորժամ եկեալ կենարարդ ի գերեզմանն Ղազարու. յորժամ եկեալ կենարարդ ի գերեզմանն Ղազարու. աւետաւոր ձայնիւդ աղաղակէիր ասելով՝ Ղազարէ՛ արի ե՛կ արտաքս: Իսկ մեռեալն ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքնդ զանմահութեան պարզեսդ ետուր սիրելւոյդ, և աստուածային ձայնիւդ ի գերեզմանէն կոչեցեր: Վասն որոյ՝ և մանկունք եբրայեցւոց ոստովք օրհնէին զանմահութազաւորութիւն քո: Ընդ նոսին և մեք ասեմք, սփսանայ՝ օրհնեալ է գալուստ քո. օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն:

Ծաղկազարդի:

Յնձա՛ երուսաղէմ և զարդարեա՛ զառազատս քո սիօն. քանզի ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ ի յաւանակի նորոյ՝ հեղութիւն ցուցանելով զայ մտանէ յա-

ուղաւոր քո: Եւ մեք աղաղակեմք. ո՞վսաննայ օրհնեալ
եկեալ ի յանուն տեառն. որ ունի զմեծ զօրորմութիւն:

Ձատի:

Քրիստոս յարեալ ի մեռելոց. մահուամբ զմահ կո-
խեաց. և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարզեաց.
նմա փառք յաւիտեանս ամէն:

Յիմանց:

Ահա որ և սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ.
որ անսկիզբն ի Հօրէ անճառարար մարմնացալ ի կուսէն.
խաչի համբերելով և կամաւոր մահուամբն իւրով զկեն-
դանութեան մեզ պարզեաց շնորհս:

Յիմանց:

Քանզի յարեալ ի մեռելոց Քրիստոս Աստուած յա-
ւիտենից՝ արարիչ և յարութիւն ազդի մարդկան. զոր
օրհնեն անգագար զինուորութիւնք հրեշտակաց և ամե-
նայն զուարթունք երկնից: Ընդ որս զօչելով ասեմք փառք
սոսկալի յարութեան քո Տէր:

Համբարձման:

Հիացան վերնական բազմութիւնքն խեսանելով զքեզ
ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին. ո՞վ է սա որ
զիմեալ գայ յեղովմայ. և եկեալ մտանէ փառօք ի փառս.
Տէր փառք քեզ:

Համբարձման:

Որ յանպատում աթոռ նստիս և յանմարմնոցն վեր-
օրհնիս, անհասանելի բանդ Աստուած ի յերկրի երևեցար
ճշմարիտ մարդ, զտնօրէնութեանն կատարեալ զխորհուրդ
խաչի և մահու համբերեցեր. և զհրաշալի զյարութիւնդ
քո ցուցեր հզօր զօրութեամբ. այսօր համբարձոր՝ փառօք
ի յերկինս և զկուսածին մարմինդ քո հրաշափառապէս

լուսազարդեցեր. զոր տեսեալ Յսայիաս՝ նախաձայնեալ ասէր.
ո՞վ է սա որ զիմեալ գայ յերկրէ: Հիացեալ պետութեանց
երկնից զոչէին առ միմեանս, և համբարձէք իշխանք զզրուս
ձեր ի վեր և մտցէ թաղաւոր փառաց: Արդ՝ որ յամենայնի
կարողդ ես և հզօր, շնորհեա և մեզ հանդիպիլ քեզ ամպովք
ի միւսանդամ՝ քո գալստեանդ, որ միայնդ ես մարդասէր:

Հոգեգալսեան:

Աստուած զքեզ խոստովանիմք զսուրբ Հոգիդ և եր-
կիր պազանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս
և խաղաղարար աշխարհի. որ զտղիտութիւն աշակերտացն
բազում զիտութեամբ լցեր. և ի հրեղէն լեզուս բաժա-
նեալ անճառելեօք ցուցար նոցա. աղաղակեմք Տէր խնա-
յեա՛ և կեցո՛ զմեզ:

Երկուսքքի:

Այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառա-
քեալսն՝ լուսաւորելով զնոսա. և այժմ՝ աղաչեմք զքեզ
սուրբ Հոգիդ Աստուած, որ ես պատճառ կենդանութեան
եղելոց և խաղաղարար աշխարհի, խնայեա և կեցո՛ զմեզ:

Երեքսքքի:

Վասն որոյ և մեք զՀոգիդ սուրբ Աստուած ընդ Հօր
և ընդ Արդւոյ միասնական խոստովանիմք. և հայցեմք մեզ
ի վերնատուողէդ զհոգևորական խաղաղութիւնդ. Տէր
փառք քեզ:

Վարդավառի:

Երևի Տէրդ այսօր աշակերտացդ ի թափօրական լե-
րինն՝ և աշակերտացդ զարհուրեալք աղաղակէին ասելով.
արասցուք երև տաղաւարս՝ մի Տեառնդ, և մի Մովսիսի
և մի Եղիայի: Արդ՝ և մեք բանաւոր հօքս երգեմք ընդ

քո ճշմարիտ վկայիցդ՝ առաքեա ի մեզ զլոյս քո շնորհացդ ի քոյ միւսանգամ գալստեանդ և կեցո՛ր:

Խաչի:

Առաջի պատուական ամենայաղթ Խաչի քոյ անկաշիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ՝ վասն սրբոյ աստուածային քո նշանի՝ շնորհեա՛ զերկնային զխախաղութիւնդ ամենայն աշխարհի:

Էջմիածնի:

Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ աղօթիւք և միջնորդութեամբ բազմաչարչար վկային քո և հօրն մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչին, մեծաւ փառօք և բազմութեամբ զօրացդ լուսեղինաց իջեր յերկնից ի դաշտն Արարատեան, ի յայցելութիւն փոքու հօտիդ քոյ ազգիս Հայոց և ի ցուցումն յատկականի սիրոյդ և մեծի ողորմութեանդ. և ոսկէ ուռամբ բաղխեցեր զխորս անդնդոց, և հալածեցեր զգունդս սանդարամետականաց. ուր և լուսաձև յօրինմամբ հրաշակերտեցեր զմայր աթոռն մեր զսուրբ Էջմիածին. և արարեր զնա շտեմարան անսպառելի շնորհացդ աստուածայնոց ի շինիլ ծնող՝ դաստիարակ և կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս հայաստանեայց: Արդ՝ պահեա զնա անարատ, հաստատուն և անաղօտ, ի պայծառազարդութիւն եկեղեցեացս մերոց և մանկանցս սոցին մինչև ի կատարած աշխարհի. յորոց միշտ փառաւորի ամենանասուրբ անուն քո յաւիտեանս յաւիտենից ամէն:

Եկեղեցոյ:

Չխաղաղութիւն շնորհեա՛ եկեղեցւոյ քում սրբոյ՝ զխաղաղութիւն և զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ, և հաստատեա՛ ի մի հաւատ զկաթողիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր և Աստուած կեցո՛ր զմեզ:

Մրբոյն Յօհաննու Կարապետի:

Չյառաջընթացութիւն քո և զկարապետութիւն Աստուծոյ բանին խափանել կարծելով՝ որ ի ձեռն կնոջն զնախաստեղծն ի դրախտէն արտաքս ընկէց: Եւ այժմ՝ զՀռօղիադա անօրէնութեամբ բորբոքեալ. և բազմելոցն Հերօղիայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց՝ զի զքոյդ հատցէ զգլուխ որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն Քրիստոս: Այլ դու որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա՛ սրում ձեռնադրեցեր պարզեել զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն:

Մրբոյն Ստեփանոսի Նախավկային:

Յնձա՛ այսօր ցնձա՛, և զուարճացիր կաթողիկէ եկեղեցի սուրբ՝ յիշատակաւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային Քրիստոսի վկայեցելոյ Հօր: Որ աղօթիւք բանայր զերկինս զոր փակեաց Ադամ. և հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն Հօր ի կերպի Ադամայ նստեալ ի յաթոռ փառաց: Որ զբազմութիւն քարանցն որպէս զծաղիկս հաւաքելով՝ բոլորէր պսակս փոխանակ փշոցն և եղեգանն: Եւ զմտրտիրոսական արիւնն իւր խառնէր ընդ փրկական արեանն Քրիստոսի հոսեցելոյն ի կողէն: Վասն որոյ՝ զերագանցեալ ի փառս առաւել քան զամենայն սուրբս՝ հայցէ և վասն մեր ի վերնատուողէն զպարզեա կենաց անվախճանից և զմեծ զողորմութիւն:

Մրբոյն Ստեփանոսի Նախավկային:

Յորովայնէ ընտրեալ սուրբն Ստեփաննոս յորովայնէ ընտրեալ սուրբն Ստեփաննոս, վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէր առ Քրիստոս Աստուածդ ասելով՝ մի՛ համարիր սոցա զայս մեզս: Արդ՝ ի ձեռն սորին բարեխօսութեանն շնորհեա՛ մեզ Տէր զմեծ քո զողորմութիւնդ:

Արքայն Գրիգորի Լուսաւորչին:

Յնժա այսօր յնժա, և զուարճանայ եկեղեցի սուրբ՝
 տօնելով մեծաւ հանդիսիւ զհանրատենչ յիշատակս քո՝
 ո՛վ գերազանցեալդ ի հարս սուրբ Հայրապետ և Լուսաւո-
 րիչ տանս Թորգոմայ սուրբդ Գրիգորիօս: Որ քոյով ան-
 տանելի չարչարանօրդ զաշխարհս ամենայն հիացուցեր:
 Անօրինակ ճգնութեամբդ զհրեղէնսն զարմացուցեր. որք և
 գունդ զունդ յերկնից ի յերկիր խոնարհեալ՝ ի տես հան-
 դիսի նահատակութեանդ փութային: Եւ անհամեմատ համ-
 բերութեամբդ զգոռոզացեալ արքայն իւրական զօրօքն
 ընդ ոտիւքդ նուաճեցեր: Եւ աստուածահաճոյ աղօթիւքդ
 զկուրացեալ միտս նոցին լուսաւորեցեր և աւետարանին
 Քրիստոսի պաշտօնեայս արարեր: Ընդ նմին և զազգս Հա-
 յոց նորոգ հոգևոր ծննդեամբ ի լոյս աստուածգիտութեան
 ածեր: Վասն որոյ և յատկապէս լուսափայլեցար ի մեջ
 ամենայն շարոց, և գառաքելականն ընկալար զաթոռ և
 զպատիւ՝ և ընդ նոսին պսակեցար ի Քրիստոսէ Աստուծոյ:
 Արդ՝ ո՛վ հայր մեր և լուսաւորիչ հոգևոց մերոց, աղաչեմք
 զքեզ միաբան ուխտիւք եկեղեցւոյ քոյ, զի յաւուրս հրա-
 շալոյ տօնի քոյ, յատկապէս բարեխօսիցես առ Քրիս-
 տոս Աստուածն մեր, զի զեկեղեցիս և զմնացորդս ժողո-
 վրդեան քոյ պահեսցէ ի խաղաղութեան՝ փրկելով ի հո-
 գևոր և մարմնաւոր թշնամեաց, զի և մեք միշտ զյիշա-
 տակս քո կատարելով՝ փառաւորեսցուք զհայր և զմրդի և
 զսուրբ Հոգին յաւիտեանս ամէն:

Արքայն Գրիգորի Լուսաւորչին:

Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսու-
 ցեր և զբանակս դիւանն հալածեցեր. մարդկան ուսուցեր
 քարոզել զերրորդութիւնն, պսակեցար յարքայութեան.
 արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:

Արքայ Առաքելոց:

Առաքեալք և վկայք Քրիստոսի Աստուծոյ՝ ամենակալ
 Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդե-
 գրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ Երրորդու-
 թեանն յորդորեցին երգել զփառս ի յաօխաեանս ամէն,

Արքայ Ռդոնցն Ռոնսման:

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից
 ի յերկիր՝ կոչելով յորդեգրութիւն զմեզ վերնոյն սիօնի.
 Հաստատութիւնքն հաւատոյ և պարճանքն եկեղեցւոյ.
 որք ցօղով արեան՝ իւրեանց մաքրեցին զտիեզերս յանօրէն
 կուսպաշտութեանց. և յմիշտ հայցեն ի Քրիստոսէ զքաւու-
 թիւն տօնողացս անուանց իւրեանց: Ա՛րդ՝ մաղթանօք
 սոցա Տէր՝ խնայեա՛ ի փրկեալ քո ժողովուրդս որ միայնդ
 ես մարդասէր:

Արքայ Մարգարտից:

Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմի
 հաւատոյ. և կարգեցեր ի սմա առաքեալս և մարգարէս,
 հովիւս և վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. և
 ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղա-
 ղութեան զսա պահեա Աստուած որպէս մարդասէր:

Արքայ Հայրապետաց:

Չհայրապետականն զարդարեցեր աթոռ ի յերկրի,
 առաքելական առեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ Քրիս-
 տոսի. ո՛վ երանելիդ ի հարս սուրբ Հայրապետ: Բանգի՛
 քո վարդապետութեանդ սերմունք բարեպաշտութեան
 բուսուցին հասկս. ուրախութեան պտուղ հատուցանելով
 և հաւատացելոցս փրկութիւնն շնորհելով. վասն որոյ բա-
 րեխօսեա՛ առ Տէր վասն անձանց մերոց:

Արքոց Թագաւորաց:

Որպէս յետ աստուածասէր թագաւորին իսրայէլի եղեկիայ յարոյց Աստուած զՅովսէ՛ որ զամենայն կռապաշտութիւնսն ի բաց ընկէց, սրպէս և բարեպաշտն Կոստանդինոս, որ զԱրիոսի զմնլումն խափանեաց. և զմեծն՝ Թէոդոս յարոյց աստուածային նախանձուն վառեալ՝ ընդդէմ՝ այնոցիկ որք զսուրբ Հոգին հայհոյէին: Արդ՝ ո՛վ աստուածարեալ և ուղղափառ սուրբ թագաւոր՝ աղաչեալ զՏէր ի փրկել զմեզ ի մարդապաշտ հայհոյութենէ. զի և մեք տօնեսցուք զյիշատակս քո՝ խնդրելով ի Քրիստոսէ զհաշտութիւն և զմեծ զոգորմութիւն:

Արքոց Թագաւորաց:

Որպէս յետ աստուածասէր թագաւորին իսրայէլի եղեկիայ յարոյց Աստուած զՅովսէ՛ որ զամենայն կռապաշտութիւնսն հնոյ ժողովրդեանն ի բաց ընկէց, որպէս և ի նորումն յարոյց զանդրանիկն թագաւորաց զբարեպաշտն Աբգարիոս, որ ի հեռաստանէ ծանեալ գերկնաւոր թագաւորն զՔրիստոս. և եղև քարոզ աստուածութեան նորա ընդ ծագս տիեզերաց: Յետ նորին և զմեծն Տրդատիոս, որ իսպառ հալածեաց զգիւամոլ կռապաշտութիւնսն յաշխարհէս հայաստանեայց. և զարդարեաց ճշմարիտ և ուղղափառ հաւատով: Արդ՝ ո՛վ աստուածարեալ և բարեպաշտ սուրբ թագաւոր՝ աղաչեալ զՏէր ի փրկել զմեզ յանօրէն բռնաւորաց. զի և մեք տօնելով զյիշատակս քո՝ խնդրեսցուք ի Քրիստոսէ զխաղաղութիւն և զմեծ զոգորմութիւն:

Արքոց Մարտիրոսաց:

Ի տաճարի սրբոց և յիշատակի սրբոց մարտիրոսաց՝ զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա

և աղօթիւք՝ զկենդանութիւնս մեր խաղաղացո՛ Աստուածորպէս մարդասէր:

Արքոց Ճգնաւորաց:

Ճգնաւորք Քրիստոսի որք տանջանաց անօրինացն համբերեցիք և զմոլութիւն կոոցն խափանեցիք. զասաւորեալք ընդ հրեշտակս ի յ'րկինս, որք ունիք զհամարձակութիւն ի Քրիստոսէ՝ բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր՝ զձ զ աղաչեմք:

Արքոց Հոխիսիմեանց:

Որք ծաղեցան մեզ յարեմոից որպէս զարեգակն, և լուսաւորեցին համանգամայն զաշխարհս հայաստանեայց փարատեցին զխաւարն անդիտութեան կռապաշտութեան. և լուսաւորեցին զամենայն հոգի հաւատով աստուածգիտութեան: Սոցա բարեխօսութեամբն Քրիստոս Աստուած՝ պարգևեալ աշխարհի քում զխաղաղութիւն. և անձանց մերոց զմեզաց թողութիւն. որպէս մարդասէր Տէր:

Արքոց Գայիանեանց:

Զյաղթական ձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի սուրբ. քանզի՛ սրբութեամբ ստացայք զկուսութիւն. և ի մարմնի զանմարմնոցն ցուցիք զհանդէս:

Արքոց Կուսանաց:

Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային զօտերք վերին սիօնի. խնդրեցէք ի Քրիստոսէ զհաշտութիւն և զմեծ զոգորմութիւն:

Արքոց Կարգանանց:

Յաշխարհական ի ճակատամարտին, յաշխարհական ի ճակատամարտին և ի մեծ պատերազմին ընդդիմամար-

տեալ լինէր անօրինացն պատերազմ: Իսկ երանելի նահա-
տակքն՝ զմոռութիւն անօրինացն խափանեցին և յաղթող
գտան. քանզի՝ որոց ստացեալ էր զաստուածային զօրու-
թիւն, ոչ ժուժկալէր նոցա մարմնաւորական պատերազմ:
Արդ՝ Քրիստոս Աստուած՝ սոցա բարեխօսութեամբն խնա-
յեա՝ ի մեզ և ողորմեա՝:

Արքոց Զինուորաց:

Զօրական և վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիս-
տոսի սուրբդ (Յէսայաս). որ փախանակեցեր զմարմինդ
ընդ հոգւոյդ քում փրկանս. և ոչ ածեր զմտաւ զսպառ-
նալիսն անօրէն բռնաւորացն: Այլ վերին ազդեցութեամբն
դիտելով զայրեցումն հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր
զտաճար կռոցն և անարգեցեր զպաշտամունս նոցա: Արդ՝
ի յաղթող պատերազմի տօնողացս զօր նահատակութեան
քոյ՝ բարեխօսեա՝ առ Տէր վասն անձանց մերոց-

Արքոց մանկանց Քառասնից:

Գնալով փառաց քոց ի փառս կաթողիկէ եկեղեցի
քո Քրիստոս մեծապէս պայծառանայ. քանզի՝ թաղաւո-
րեալքն ի քէն դիմեալք ի յեբկինս, ի Սեբաստիայ նահա-
տակին՝ ի յամօթ և ի քարընկէց յերեսս բանասրկունն:
Որք և քաջալերէին զմիմեանս. զի մի՛ լուծեալ ոք բաղա-
նեօք անցաւորիս պակասեցի, այլ զողայով առաքինաբալ՝
զինքն ըղերձեալ ի յանիւս աստուածային զանձուցն հօր-
վիցի աղաղակելով առ Քրիստոս: Արդ՝ սոցա բարեխօսու-
թեամբն՝ ընկա՛լ և զօրգեզրութիւն ժողովոյս մերոյ ի յոյ՞
սիրողաց քոց՝ Տէր փառք քեզ:

Արքոց Երից մանկանց:

Որ ի վերայ քերովբէիցն հանդէս և ի զօրացն հրե-
զինաց օրհնաբանիս իջեր ի Բաբելոն և փրկեցեր զերկո՞

մանկունսն ի հրոյն բռնութենէ: Որք աղաղակելով գոչէին
երգ նոր. ամենայն զորձք օրհնեցէ՛ք և բարձր արարէք:
Թաղաւոր փառաց և արարիչ բոլորից՝ որ մարգասիրապէս
զթացար ի սուրբ մանկունսն և փրկեցեր ի բորբոքեալ բո-
ցոյն, որք անարգեցին զբռնութիւն թաղաւորին և շիջու-
ցին զզօրութիւն հրոյն. ընդ նոսին և մեք քեզ վերագո-
չեմք, փրկեա՛ զմեզ ի հրոյն յաւիտենից: Զի դու միայն
ես բազմագուլթ Տէր՝ քեզ փառք յաւիտեանս ամէն:

Արքոց Հրեցակաց:

Զոր օրհնեն անյուշի ձայնիւ իմանալի զօրութիւնք՝
երկնաւոր նահապետութիւնք: Հրեշտակք և հրեշտակա-
պետք. Աթոռք և Տէրութիւնք. Իշխանութիւնք և Պետու-
թիւնք. Սերովբէք և Քերովբէք՝ և մեք օրհնեսցուք զնոյն
ամենասուրբ Երրորդութիւնն և զմի Աստուածութիւնն:

Արքոց Հրեցակաց:

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութիւն
ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետու-
թեանցդ կատարելով զտօնախմբութեան տօնս: Եւ ընդ
անմարմնականաց և հոգեղինաց զասուցդ՝ և մեք մարմ-
նականքս և հոգեղինքս համաձայնեալ փառաւորեմք զփա-
ռաւորեցեալն ի ձէնջ: Արդ՝ ով սուրբ Պարրիէլ և Միքա-
յէլ մեծ հրեշտակապետք բարձրելոյն. և ամենայն զինուո-
րութիւնք երկնից՝ որք կայք միշտ առաջի աթոռոյ աս-
տուածութեանն. անդադար բարեխօս լերուք վասն մեր
առ Տէր վերաբերել զմեզ զամենեսեան ընդ ձեզ յերկնից
արքայութիւնն. և միաձայն բարբառով երգել զփառս:

Ամենայն սրբոց:

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, սրբոյն Յօհաննու Կարապետին, սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց Առաքելոց և Մարգարէից, Հայրապետաց և Վարդապետաց, Մարտիրոսաց և Թաղաւորաց, Ճգնաւորաց և Կուսանաց, Նահատակաց և Միանձանց, և Ամենայն սրբոց քոց Հնոց և Նորոց, Յայտից և Անյայտից, որոց այսօր է յիշատակ գիտադուլթիւն և զերկնային ողորմութիւն քո պարզեւեմ մեզ մարդասէր Տէր:



Վերջաբանութիւն Տօնացուցիս. եւ իբրու Կսակ արարողի սորին առ մերազնեայս:

Արդ՝ վերջապէս դաքքանս իբրու կտակ և հարկաւորապէս պատուէր աւանդեմ՝ օրհնեալ և հարազատ ազգիդ իմոյ. զի որովհետեւ իբր դէտ կացուցայ ձեզ յԱստուծոյ, հարկ դոյ ի վերայ իմ՝ ի զգուշացուցանել զձեզ յամենից վնասակարաց՝ և ազատիլ ի պարտուց, ըստ անսուտ բանին նոյնոյ Աստուծոյ՝ որ առ եզեկիէլ: Արդ սիրելիք մեր, զիտէք իսկ ամենեքեան՝ զի հեշտասէրք և ատաւորք ոմանք, որք զօրով ի բնէ յազդէս և յեկեղեցւոյս մերմէ՝ ո՛չ այլով իւրիք զիտմամբ, եթէ ո՛չ միայն վասն մարմնականի հեշտութեանն և անսանձ որկրամոլութեանն իւրեանց, ուրացեալք զեկեղեցիս և զազգս մեր՝ յորս ծնեալք և սնեալք են, յարին յայլ ազգս քրիստոնէից. որք պերճք են թաղաւորութեամբ և հարստութեամբ, և ազատք ի մարմնական պակասութեանց և յայլազգական բռնութեանց: Արդ՝ այսպիսիք որք հարկեցեալք ի մարմնական նեղութեանց և պակասութեանց, թողեալք զիւրեանցսն՝ յարին առ այլ ազգս՝ զի ի հեշտութեան մնայցեն, զկոկորդս և զցանկութիւնս մարմնոց իւրեանց (որոց իսպառ ծառայք են լեալք) փոքումբ իրօք ո՛չ կարեն լցուցանել, և առայնս ազգս յորս դիմեալք են, իբրև զգաբաւօնացիս փայտակոտորք և ջրակիրք են համարեցեալք. և յաչս որոց միշտ արհամարհեցեալք՝ իբրև ոչինչ են առաջի նոցա՝ և զոչինչ կարեն առնուլ ի նոցանէ: Իսկ՝ և ի մէնջ ի բնական յազդէս իւրեանց և ո գոչինչ կարեն խնդրել որով և իցէ պատճառօք. զի ուրացօղք են հայրենաւանդ ուխտին և եկեղեցւոյն իւրեանց: Վասն այսօրիկ՝ և հարկաւորին ի գտանել ըստ գաբաւօնացւոցն զգանազանակերպ հնարս

խաբէութեան, զի ըստ կարծեաց իւրեանց խափեցեն զնոսա և զմեզ՝ զի ապրեսցին:

Եւ մինչ այսպիսիքս ունին միշտ ի յունկս իւրեանց զհնազոյն հեղինակն և ուսուցիչն լաւապէս կեցութեան, ուսան ի նմանէ զպէս պէս արհեստս խաբէութեան, այսինքն՝ զկեղծաւորեալ բժշկականութիւնո մարմնաւոր, զմուշար և զթիւր վարդապետութիւնս հոգևոր և զայլս այսպիսիս: Որովք սկսան շրջիլ՝ և յաճիլ յերկրէ յերկիր՝ և մտանել տանէ ի տուն, և գերել զթուլամորթ անձինս զիւրապիսիս, զշեղջակուտեալս մեղօք՝ և զվարեալս ի պէս պէս ցանկութիւնս: Որոց ըստ ախորժակացն՝ նախապէս ի պատճառս բժշկութեան մարմնոյն՝ զպահան ուսեցուցանեն. և ապա զհոգին ի ճշմարիտ հաւատոյն մոլորեցուցանեն պէս պէս զիււաշունչ վարդապետութեամբ. և ապա իբր մեծ բարերար նոցա ձեանալով՝ զարիւնս նոցա ծծեն տղրկաբար և յօրանան:

Բայց՝ այսօրիւք հնարիւք թէպէտ ծծեցին և ծծեն զարիւնս ոմանց թուլամորթացն մերոց խաբէութեամբ որպէս ասացաք, սակայն՝ այնց կողմնացուցն ոչինչ հաճոյացան. և ո՛չ խաբել կարացին: Ապա թելադրութեամբ նոյն հնազոյն հեղինակին իւրեանց՝ զտին զայլ իմն զօրեղազոյն արհեստ խաբէութեան, որով իբրու ըստ կարծեաց իւրեանց կարիցեն խաբել զերկուս կողմունս ևս. այսինքն է՝ զտպգրութիւնն, որ ո՛չ եթէ ճշմարտութիւն, այլ՝ ստատպութիւն և աղաւաղող ճշմարտութեան: Քանզի՝ որովհետև ամօթն յերեսացն է բարձեալ՝ և երկիւզն ի սրտիցն, զողանան աստի և անտի և անտի ի մէնջ և ի նոցունց զգրեանս հնազունից սրբոց վարդապետաց, և ապականեալ այլայլեն զմիտս հեղինակացն, և ըստ ախորժակաց իւրեանց զինչ՝ և որպէս կամին, զրեն՝ տպեն՝ և սփռեն յազգս մեր. զնոսա խաբելով թէ՛ զձերն տպելով արկանեմք յազգն

Հայոց, զի նորօք զարձուսցուք զնոսա առ ձեզ. և զազգս Հայոց խաբեն թէ՛ վասն ձեր ցաւիմք՝ և աշխատիմք վասն օգտի ձերոյ, զի ուսանիցիք: Բայց ինքեանք՝ ո՛չ զնոցա հաւատ և զկրօնն պահեն, և ո՛չ զմերն. ապա յիրաւի ասացաք՝ սուտք են՝ և ստեն առ նոսա և առ մեզ:

Այլ՝ այս է միայն դիտումն նոցա ճշմարտապէս, զի այսպիսեօք խաբէական հնարիւք զարիւնս միամտացն ազգիս Հայոց ծծիցեն՝ և զբարեբար տղրկի յազեցուցանիցեն, որպէս և առնեն իսկ: Ո՛հ, զի՞նչ ասեմ. քանզի՝ երկիրն յամենայնի բարելի. ամենայն նիւթք՝ գործիք և արհեստաւորք առատք և առ ձեռն պատրաստք և զիւրազինք. իշխանութիւնն քրիստոնէից. ինքեանք ազատք յամենայնի և անվիշտք յայլազգական բռնութեանց և պահանջմանց, զործն թարց արգելառթից և յաջող ըստ ամենայնի: Մրեն զթուղթս, ընուն ծաղրաբանութեամբ և շատախօսութեամբ. զարդարեն արտաքուստ, որպէս և կամին. ընուն զնաւս առաքեն այսր և անոր որպէս զմի հազուագիւտ և զարմացուցիչ նոր իմն. և ծախեն չորիցս և հնդիցս գնով: Միամիտ և օրհնեալ ազգն մեր ևս՝ տեսեալ զվերերևոյթ գեղեցկութիւնն, կարծէ թէ՛ լի է անծանօթ գիտութեամբ. իսկ ի մէջ նոցա եթէ ի հարիւրից և ի հազարաց մին գտաինցի պիտանի և ընդունելի, զայն ի մէնջ՝ և ի զրեանց մերոց են զողացեալ. իսկ զայլսն զոյս իբրու ինքեանք են յարմարեալ, բովանդակքն են առասպելախօսութիւնք և աւելորդաբանութիւնք՝ որպէս յայտնի է գիտնոց:

Իսկ և ասացի թէ՛ աղաւաղեն և այլայլեն զբանս հնոց սրբոց հեղինակաց. զմինն տամ ձեզ օրինակ, սովաւ և զայլսն զիտասջիք: Սրբոյն ներսիսի շնորհալոյն զրեամբք, լի է ազգս մեր. թէ՛ զըլազորք և թէ՛ տպեցելովք. ո՛չ ուրեք գոն ասացեալք ի նմանէ վասն Հոգւոյն սրբոյ ի Հօրէ և յՈրդւոյ բլխեալ: Ահա՛ անամօթքն այնք՝ ի ժամադրքոջն

զոր իւրեանք տպեալ են, ի մէջ Առաւօտ լուսոյին՝ և յեր-
զրս Արևադալին դնեն թէ՛ բղխումն ի հօրէ և յՈրդւոյ,
և թէ՛ ի հօրէ և յՈրդւոյ բղխեալ Հոգի, որք ոչ ըստ չա-
փաւորութեան ուտիցն յարմարին, և ոչ ըստ մտաց հեղի-
նակին:

Արդ՝ զայսոսիկ, զորս ամենայն որ զիտէ թէ կարգա-
ւոր և թէ աշխարհական. և զրեանքն յամենայն տեղիս
գտանին՝ եթէ չամաչին ի թունաւորեյն և յայլայլեյն ապա
զայնս զրեանսն որք շեն տպեցեալք, և հաղուաղիւտք են
ի յագգս մեր՝ արդեօք ո՞րքան այլայլեն և թունաւորեն.
մտածելի է: Այսպէս աշխատին վասն օղտին ազգիս Հա-
յոց՝ և ցաւին վասն մեր խտրեբայքն այնոքիկ:

Արդ՝ ասեմ սիրելեացդ իմոց օրհնեալ ազգիդ Հայոց,
և իբրև զկտակ յախտենական աւանդ եմ ձեզ ամենե-
ցունցդ, որք էք ազգաւ հայ, հաւատով քրիստոնեայ,
կրօնիք և դաւանութեամբ Լուսաւորչական, և սրբոյ և
Քրիստոսաիջի Աթոռոյս Էջմիածնի շնորհասուն և հոգեծին
զաւակք, զի ո՛չ է մեզ մարտ և վէճ ընդ այլ ազգս քրիս-
տոնէից՝ որք ի բնէ այլեն ի մէնջ, ազգաւ և կրօնիք, և
ոչ զոյ թշնամութիւն ինչ նոցա առ մեզ, և կամ մեր առ
նոսա. զի եղբարքն են մեզ և սիրելիք. ըստ այնմ՝ որ
քրիստոսեանք են: Այլ հակառակք մեր և թշնամիք՝ մեր
ընտանիքն են. որք ի մէնջ ելեալք զմեզ խաճատեն: Նոքա
են որպէս զցեցք՝ որք ի հանգերձէ ելեալք՝ զնոյն հան-
դերձն ծակոտեն: Եւ որպէս զորդն՝ որք ի փայտէ ելեալք՝
զնոյն փայտն մաշեն: Նոքա են աղուեսունքն փոքունք,
որք զայգիս մեր ապականեն: Նոքա են կարագետք նե-
օինն, որք արդէն իսկ եկեալք են: Որք առ ի մէնջ ելին,
այլ ոչ էին ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ
մնային. այլ զիտասջի՛ք, զի ո՛չ էին և ո՛չ են ի մէնջ:
Քանզի՛ են թէպէտ որդիք Ազամայ, սակայն՝ կայեն՝ և

կայինեանք են, են թէպէտ նոյաճին զաւակք. բայց Քամ
են, և քամայինք: Էին թէպէտ աշակերտք Քրիստոսի, բայց
յետոյ Յուդա և յուդայեանք եղեն: Ուրեմն՝ խոտելիք են
որպէս զկայեն, զՔամ, և զՅուդայ. ատելիք են և հալա-
ծելիք որպէս զսողունս թունաւոր. և որպէս զխաբեբայ
աղուեսունս զապականիչս կանոնաց և կարգաց սրբոյ եկե-
ղեցւոյս մերոյ: Նոքա որք զմեզ և զեկեղեցիս մեր ուրա-
ցան, և զմեզ հերձուածս և մոլորեալս կարգան և զրեն,
զանունն իւրեանց ի վերայ մեր դնելով, զի՞նչ վայելէ մեզ
զայնպիսի ուրացեալսն իբրև զբարեկամ համարիլ և կամ
ընդունիլ զապականեալ զրեանս նոցա:

Վասն որոյ՝ աղաչեմք զձեզ զամենեսեանդ, իմ սիրելի
ազգդ Հայոց՝ ի սէրն Քրիստոսի և սոսկալի չարչարանաց
սրբոյն Քրիզօրի Լուսաւորչին մերոյ, խոտեցէ՛ք զնոսա
իսպառ և ատեցէ՛ք. խորշեցարո՛ւք ի նոցանէ և հալածե-
ցէ՛ք ի ձէնջ, որպէս մահաբեր թշնամի հոգւոց և մարմնոց
ձերոց:

Նոյնպէս զխաբեալի և զթունաւոր զրեանս նոցին խո-
տեցէ՛ք և անհետ արարէք ի միջոյ ձերմէ. որք յարտա-
քուստ երևին թէպէտ զեկեցիկ, սակայն ի ներքուստ լի են
զարշահոտութեամբ և նենգաւորութեամբ՝ որպէս զմահա-
բեր զեզ մեզրապատեալ: Զի եթէ վասն հաւատոյ դաւա-
նութեան՝ և աւանդութեան եկեղեցւոյ են՝ ունիմք մեզ
բաւական զայնպիսի զրեանս ի նախնեաց երջանկացն մերոց:
Ուստի՛ ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի, ասեմ. եթէ
ոք աւետարանեսցէ ձեզ աւելի այլապէս՝ քան զոր ունիք
ի նախնեաց մերոց հարցն սրբոց՝ նզովեալ եղիցի: Քանզի
հաւատն մեր ո՛չ է հնացեալ զի նորոգեսցի. և ո՛չ է թերի
զի լրացի. այլ՝ շնորհօքն Քրիստոսի ունիմք ի սրբոյ Լու-
սաւորչէն մերմէ և ի նորին շառաւիղացն զկատարեալ հա-
ւատ, զուղիղ զաւանութիւն, և զզեղեցիկ աւանդութիւնս

սրբոյ Եկեղեցւոյ. որ բաւական է մեզ ի փրկութիւն և ի կեանս յաւիտենականս ածել: Որ և վկայ և երաշխաւոր իսկ դնեմ՝ զիս առաջի Քրիստոսի, և սրբոյ Լուսաւորչին մերոյ ի հանդերձելումն. զի եթէ ոք ընդ այս հաւատոյս և դաւանութեանս (գորս ունի Եկեղեցիս Հայաստանեայց), բռնիցի նաև զգործս բարիս ըստ պատուիրանին Քրիստոսի՝ անկարծիք ժառանգելոց է զկեանս յաւիտենականս. և քան զայս աւելին ի չարէն է:

Եւ ըստ ասից ումեմն իմաստնոյ.
 Ի յայս հաւատոյս որք հետին,
 Զայլ ինչ պատճառ բնաւ չունին.
 Միայն ծառայք են լեալք պորտոյ,
 Անյապ մարմնոյ և որկորին:
 Այսու պատճառօք գնացին,
 Գնան և ևս նմանիք նոցին.
 Զի բանք սուրբ գրոցն լրբասցին,
 Մինչ կորստեանքն կորնչին:

Աւրեմն՝ հարկիւ և հարկիւ պատուիրեմ՝ օրհնեալ և հարազատ լուսաւորչաձին զաւակացի սրբոյ Էջմիածնի. զի խոտիցէք իսպառ և անհետ տունիցէք զթունալի գրեանս՝ նոցին և զբանս, որք վասն հաւատոյ, դաւանութեան, և եկեղեցական արարողութեան իցեն՝ որք յեկեղեցիս մեր վերաբերին. և կամ օտար և ներհակ իցեն աւանդութեան և արարողութեան Եկեղեցւոյս մերոյ: Գիտասջիք, զի եթէ ոք ոչ պահեսցէ զպատուէրս զայս, ոչ եթէ միայն յինէն, և յիմապիսաց Հոյրապետացն է նդովեցեալ, այլ՝ ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ է նդովեցեալ. մանաւանդ՝ և զնա ունելոց է պատախազ ինքեան, որ զայնքան սոսկալի չարչարանս նորին արհամարհեաց, և զնա, և զնորին ուսու-

ցեալ հաւատն ուրացաւ. և ծակամուտ խաբեբայիցն և նոցին հաւատոյն հետեցաւ:

Իսկ եթէ այնպիսի գրեանք յառաջ գայցեն ի նոցունց որք ընդդէմ հաւատոյ, դաւանութեան, և եկեղեցւոյս մերոյ չունիցին զբանս. այլ ըստ աշխարհի զիտութեան իցեն, և աշխարհականաց պարապելիք. զայնպիսն (ներելով ասեմ՝) եթէ ստանայք ևս, իբրև զօտարագլոյ զիրք համարեալ՝ որպէս զչրտես մտէ՛ք ի նոսա. զձեր պիտանին առնելով՝ զխոսանն ի բաց ընկեսջիք: Որ և եթէ տէր յաջողեսցէ, նորին ուղորմութեամբն և սրբոյ Լուսաւորչին մերոյ օգնականութեամբն, սուրբ Աթոռ մայրս ձեր՝ քան զնոսա լաւագոյնս՝ և հարկաւորս ընծայելոց է օրհնեալ և հարազատ որդւոցի իւրոց այսուհետև:

Քանզի՝ ահա հինգ ամ է. յորս աշխատիմք և տըքնիմք, զի զարհեստս զայս ի ձեռն բերյուք և հաստատեսցուք ի սուրբ Աթոռոջս (որում իսկ վայելէ՛ զայսպիսի հոգեպարար և օգտաշատ գեղորայս և կերակուրս հնարել և բաշխել իւրաձին որդւոցի), զոր և հաստատեցաք իսկ Աստուծով:

Յորում տպեցաք նախապէս զքանի հատ Սաղմոսս, որ զտհասութիւնս շատ ունէր նկատմամբ տպեցմանն: Երկրորդապէս՝ տպեցաք զփոքրիկ գիրքն Աղօթից և ևս փորձելոյ աղազաւ զպարագայս գործոյս՝ որ թէպէտ հասուն էր քան զսաղմոսն, սակայն՝ և ևս ունէր զտհասութիւնս ոմանս՝ որքան առ գործս այս: Ապա երրորդապէս տպեցաք զՏօնացոյցս զայս, որ Աստուծով քան զնոսա հասուն է և կատարեալ:

Եւ եթէ ուրեք ուրեք գտանիցի տհասութիւն ինչ մի մեզադրիցէք. քանզի՝ զգժուարութիւն գործոյս փորձողքն լաւապէս զիտեն. և ուր ուրեք յառաջացեալ է այս գործ, ի նոցին նախատպեցեալքն ևս գոն՝ զորս տե-

սանէք. որք ևս չեն մեղադրելիք, զի ամենայն արհեստ յօրէ յօր փորձիւ զարդարի:

Աստանօր՝ խոհեմազունից մտաց է ենթադատելի. զի այնց տեղեացն (յորս գործավարքն իցեն շատ տեսեալք և ընտելք, ինքեանք յամենայնի ազատք յայլազգական կեղեքմանց, նիւթք և ամենայն պիտանիք գործոյն՝ առատք և առ ձեռն պատրաստք)՝ եթէ գործն ունիցի գոհասու- թիւն ի սկզբանն, ապա զի՞նչ կարծելի է գմերմէ գործոյ. որք կամք ի յամենայնի բարեաց աղքատութեան և յամա- յութեան վայրոջ. ի մարդոց պիտանեաց ունիմք գմեծ սովս. դտանեցեալքն ևս անկիրթք և անյարմարք. գնիւ- թոց հարկաւորաց և զայլոց պարագայից գործոյս՝ ո՛չ զմի ունիմք առ ձեռն. այլ՝ զամենեսեան ի հեռուստ վայրաց բերեմք մեծաւ տաժանմամբ և տասնապատիկ ծախիւք: Եւ զայնս ևս ի յառ ձեռն բերելն մեր որպէս և իցէ, անպէն մրրկածին ժամանակն, և կատարի ժամանակաւորքն որք գմեօք՝ միջաբեկ առնեն զմեզ, և խափանեն զյառաջադրե- ցեալ կամս մեր: Թողլով ուրեմն զայսպիսիս խոհեմազու- նից մտաց սիրելեացդ իմոյ՝ զայս ասեմ վերջապէս. զի իր մի՛ որքան հազուադիւտ և դժուարըստաց իցէ և պիտի այնքան մեծաւ յարգանօք և կարի փափազմամբ ընդունի և սիրի: Նոյնպէս պիտասջիք գնորաբոյս՝ հազուադիւտ և և զանուշահոտ ծաղիկս զայս ի շնորհաբուղիս ծնողէս ձեր- մէ ձեզ ընծայեալ. զոր և սիրով մեծաւ և փափազանօք ընկալեալ՝ ուրախութեամբ և շնորհակալութեամբ վայելես- ջիք, և զիս զցաւազնեալ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ հայրս ձեր՝ և զհամայն աշխատողս ի սմա, յիշեսջիք ի յաղօթս ձեր:

Վերջապէս և այս լիցի պատուէր սիրելեացդ իմոց կտակապէս: զի ուր, և երբ կամիցիք տպել և կամ տպե- ցուցանել զգիրքս զայս, զառաջաբանութիւնն որ ի սկզբանն,

և կտակապէս պատուէրս զայս որ ի վերջոյ եղաւ՝ թարց աւելացուցման և պակասեցուցման, և առանց դանցառման տպեսջիք ընդ զբոյս. զի մնասցեն ի յարձան և ի նշան ազատութեան ինձ ի պարտուց իմոց՝ և պարտականութեան չլսողացն: Եւ դուք վարձատրեցեալք ի Քրիստոսէ: Ո՛ղջ լերուք ի Տէր:

Վասն սեղափոխեցեալ տօնիցն գիսասչիփ եւ զայսմանս ի կարոյ:

Արդ՝ « օնքն այնքիկ որք յամենայնում ամի տեղա- փոխին և շարժին ի տեղեաց իւրեանց ըստ բերմանց տա- րեզրացն, յայտնի է ամենից՝ որոց միշտ ի միում տեղուջ տօնիլն անկարելի իսկ է. վասն այնպիսեացն արարաք մա- նաւանդ զԵրկրորդ հատորն Տօնացուցիս ի վերայ երեսուն և վեց զբոցն մերոց, որպէս զի՛ իւրաքանչիւր տարեգիր զիւրոյ տարւոյ շարժական տօնսն տեղաւորիցէ ի զիւրու- թիւն տօնողացդ, որպէս ասացաք ի յառաջաբանութեանն: Իսկ ի յանշարժից տօնից ոմանց, զորս մեր փոխեցաք ի տեղեաց իւրեանց, (որպէս յիշեցաք ի յառաջաբանու- թեանն հանդերձ պատճառօքն, զորս վերայիշեմք ի ներքոյ) զայնոսիկ ի տօնելն ձեր ի յեղեալ օրն ըստ նորոգ տօնա- ցուցիս, ոմանց յարմարին նոյնոյ աւուր եղեալ գիրք և աւետարանքն ի ճաշոցին. զորս պարտիք ընթեռնուլ: Իսկ ոմանց որոց ո՛չ յարմարին, և դուք մնայք ի տարակուսի, ահա ի լուծումն տարակուսանաց ձերոց ասեմ զայս:

Հասարակ սրբոց և մարտիրոսաց՝ յորոց զոմանս փո- խեալ ի տեղեաց իւրեանց յայլում աւուր եղաք. որոց ո՛չ զոն յանուանէ և որոշեալ գիրք և աւետարանք ի յաս- տուածաշունչն ի յաւուր տօնի նոցա եթէ ձանձրասջիք ի գտանել զգիրք և զաւետարանս նոցա՝ ի ճաշոցին՝ զգիրք և զաւետարան մի հասարակ տօնից մարտիրոսաց, որն

սանէք. որք ևս չեն մեղադրելիք, զի ամենայն արհեստ յօրէ յօր փորձիւ զարդարի:

Աստանօր՝ խոհեմագունից մտաց է ենթադատելի. զի այնց տեղեացն (յորս դործավարքն իցեն շատ տեսեալք և ընտելք, ինքեանք յամենայնի ազատք յայլազգական կեղեքմանց, նիւթք և ամենայն պիտանիք դործոյն՝ առատք և առ ձեռն պատրաստք)՝ եթէ դործն ունիցի զտհասութիւն ի սկզբանն, ապա զի՞նչ կարծելի է զմերմէ դործոյ. որք կամք ի յամենայնի բարեաց աղքատութեան և յամաշութեան վայրոջ. ի մարդոց պիտանեաց ունիմք զմեծ սովս. դտանեցեալքն ևս անկիրթք և անյարմարք. զնիւթոց հարկաւորաց և զայլոց պարագայից դործոյս՝ ո՛չ զմի ունիմք առ ձեռն. այլ՝ զամենեսեան ի հեռուստ վայրաց բերեմք մեծաւ տաժանմամբ և տասնապատիկ ծախիւք: Եւ զայնս ևս ի յառ ձեռն բերելն մեր որպէս և իցէ, անդէն մրրկածին ժամանակն, և կատաղի ժամանակաւորքն որք զմեօք՝ միջաբեկ առնեն զմեզ, և խափանեն զյառաջադրեցեալ կամս մեր: Թողլով ուրեմն զոյսպիսիս խոհեմագունից մտաց սիրելեացդ իմոյ՝ զայս ասեմ վերջապէս. զի իր մի՛ որքան հազուադիւտ և դժուարըստաց իցէ և պիտի այնքան մեծաւ յարգանօք և կարի փափագմամբ ընդունի և սիրի: Նոյնպէս գիտաօջիւք զնորաբոյս՝ հազուադիւտ և և զանուշահոտ ծաղիկս զայս ի շնորհաբուղիս ծնողէս ձերմէ ձեզ ընծայեալ. զոր և սիրով մեծաւ և փափագանօք ընկալեալ՝ ուրախութեամբ և շնորհակալութեամբ վայելեսջիք, և զիս զցաւազնեալ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ հայրս ձեր՝ և զհամայն աշխատողս ի սմա՝ յիշեօջիք ի յազօթս ձեր:

Վերջապէս և այս լիցի պատուէր սիրելեացդ իմոց կտակապէս: զի ուր, և երբ կամիցիք տպել և կամ տպեցուցանել զգիրքս զայս, զառաջաբանութիւնն որ ի սկզբանն,

և կտակապէս պատուէրս զայս որ ի վերջոյ եղաւ՝ թարցաւեւացուցման և պակասեցուցման, և առանց զանցառման տպեօջիք ընդ զըբոյս. զի մնացեն ի յարձան և ի նշան ազատութեան ինձ ի պարտուց իմոց՝ և պարտականութեան չլսողացն: Եւ դուք վարձատրեցեալք ի ֆրիստոսէ: Ո զջլերուք ի Տէր:

Վասն սեղալիտեցեալ տօնիցն գիսասցիփ և զայսմանս ի կարնոյ:

Արդ՝ « օնքն՝ այնօքիկ որք յամենայնում ամի տեղափոխին և շարժին ի տեղեաց իւրեանց ըստ բերմանց տարեդրացն, յայտնի է ամենից՝ որոց միշտ ի միում տեղւոջ տօնիլն անկարելի իսկ է. վասն այնպիսեացն արարաք մանաւանդ զերկրորդ հատորն Տօնացուցիս ի վերայ երեսուն և վեց զրոցն մերոց, որպէս զի՛ իւրաքանչիւր տարեգիր զիւրոյ տարւոյ շարժական տօնսն տեղաւորիցէ ի զիւրութիւն տօնողացդ, որպէս ասացաք ի յառաջաբանութեանն: Իսկ՝ ի յանշարժից տօնից ոմանց, զորս մեք փոխեցաք ի տեղեաց իւրեանց, (որպէս յիշեցաք ի յառաջաբանութեանն հանդերձ պատճառօքն, զորս վերայիշեմք ի ներքոյ) զայնոսիկ ի տօնելն ձեր ի յեղեալ օրն ըստ նորոգ տօնացուցիս, ոմանց յարմարին նոյնոյ աւուր եղեալ զիրք և աւետարանքն ի ճաշոցին. զորս պարտիք ընթեռնուլ: Իսկ ոմանց որոց ո՛չ յարմարին, և դուք մնայք ի տարակուսի ահա ի լուծումն տարակուսանաց ձերոց ասեմ զայս:

Հասարակ սրբոց և մարտիրոսաց՝ յորոց զոմանս փոխեալ ի տեղեաց իւրեանց յայլում աւուր եղաք, որոց ո՛չ գոն յանուանէ և որոշեալ զիրք և աւետարանք ի յաստուածաշունչն ի յաւուր տօնի նոցա եթէ ձանձրաօջիք ի գտանել զգիրք և զաւետարանս նոցա՝ ի ճաշոցին՝ զգիրք և զաւետարան մի հասարակ տօնից մարտիրոսաց, որն

Հանդիպիցի և առ ձեռն գայցէ ի մէջ ճաշոցին՝ գայնս ընթերցելիք անտարակոյս, որ չէ ինչ անտեղի: Իսկ այնպիսեաց սրբոցն տեղափոխեցելոց, որոց զոն յատուկ և յանուանէ զիրք և աւետարանք, ի յաւուրս տօնի նոցա՝ ահա նշանադրեցաք զգիրք և զաւետարան իւրաքանչիւրոցն ըստ համարագրոյ ճաշոց զրբոյն. որոց ի պատահի՛ն ձեր ի մէջ տօնացուցիս, գտջիք ի մէջ ճաշոցին զգիրք և զաւետարանն ըստ համարագրոյն և ընթերցելիք:

ՏԵՂԱՓՈԽԵՑՆԱԼ ՏՕՆՔ:

Ձկնի Ս. Հոգւոյ գալստեան ի միջոցի առաջին Կիւրակէի Յարութեան եւ Վարդավառին:

Շաբաթ. Ներսիսի հայրապետին և Խաթայ եպիսկոպոսին. (զիտ զգիրք և զաւետարանն ի ճաշոցին տպագրեալն յԷջմիածին ի 1872 ամի յերես 505):

Շաբաթ. Տրդատայ թագաւորին. (զիտ ի ճաշոցին զգիրք և զաւետարանն յերես 521):

Երեքշաբաթ. Զաքարիայ մարգարէին. (զիտ ի ճաշոցին յերես 526):

Ի մէջ Վարդավառին եւ Աստուածածնին:

Երկուշաբաթ. Կիպրիանոսի եպիսկոպոսին. և այլն. (տե՛ս ի ճաշոցին տպագրեալն յԷջմիածին ի 1872 ամի յերես 564):

Երեքշաբաթ. Աթանաղինեայ եպիսկոպոսին. և այլն. (տե՛ս ի ճաշոցին յերես 565):

Հինգշաբաթ. Նախահարցն. (տե՛ս ի ճաշոցին յերես 567):

Շաբաթ Որդւոց և Թոռանց Լուսաւորչին. (տե՛ս ի ճաշոցին յերես 572):

Երկուշաբաթ. Մակաբայեցւոցն. (ի միւս երկուշաբաթօրն՝ տե՛ս ի ճաշոցին յերես 575):

Հինգշաբաթ Սովիայ. և այլն. (տե՛ս ի ճաշոցին յերես 581):

Ի մէջ Աստուածածնի եւ Սրբոյ Խաչին:

Հինգշաբաթ. Երեմիայի մարգարէին. (զկնի սորին շաբաթօրն, տե՛ս ի ճաշոցին տպագրեալն յԷջմիածին ի 1872 ամի յերես 604):

Շաբաթ. Թօմայի, Յակոբայ և Շմաւօնի առաքելոցն. (ի միւս շաբաթօրն՝ տե՛ս ի ճաշոցին յերես 606):

(Եւ թէ Յակոբ և Շմաւօն առաքեալքն բաժանեալք ի միւս շաբաթօրն տօնիցին. զգիրք և զաւետարանն՝ սուրբ Յակոբայ պահոց երեք շաբաթ աւուրն կարդա (տե՛ս ի ճաշոցին յերես 733):

Երեքշաբաթ. Մարգարէիցն Եգեկիէլի. և այլն:

Հինգշաբաթ. Յօհաննու Կարապետին և Յօբայ աբղարոյն. (անց ի միւս շաբաթն տե՛ս ի ճաշոցին յերես 612):

Ձկնի սուրբ Խաչին ի մէջ Եօթն շաբաթուց:

Շաբաթ. Թարգմանչացն մերոց Մեսրօպայ. և այլն. (տե՛ս ի ճաշոցին յերես 662):

Շաբաթ. Երկոտասան վարդապետաց. (զգիրք և զաւետարանն. (տե՛ս ի ճաշոցին յերես 52):

Շաբաթ. Յօհաննու Ոսկեբերանին. (տե՛ս ի ճաշոցին յերես 686):

Վերջին շաբաթօրն, Աբգարու թագաւորին. զգիրք և զաւետարանն. (տե՛ս ի ճաշոցին յերես 745):



Ա

Գիր **սարույն:**

Յօթներեակ Հով 4:

Ձայն

Յունիսր

- բկ 6 Երեքշաբթ, Ծնունդ և Յայտնութիւն Քրիստոսի: (Միջոց ուտիքն վեց օր է):
- աձ 11 Կիրակէ, վեցերորդ օր ծննդեանն Քրիստոսի (և բարեկենդան առաջաւորի պահոցն):
- ակ 12 Երկուշրթ. եօթներորդ օր ծննդեանն Քրիստոսի: (և պահք առաջաւորին):
- բձ 13 Երեքշրթ. պահոց, ութներորդ օր ծննդեանն Քրիստոսի:
- բկ 14 Զորեքշրթ, պհց. Հրց. աղց. աձ. Երգէին:
- գձ 15 Հինգշրթ. պհց. Հրց. աղց. ակ. Փառաւորեալ յաւիտեան:
- գկ 16 Ուրբաթ. յիշատակ Յօնանու մարգարէին:
- դձ 17 Ծաբաթ. տօն ծննդեան սրբոյն Յօհաննու Կարապետին:
- դկ 18 Կիրակէ յարութեան: Հրց. դձ. Փառաւորելով: Հմբ. դկ. Փառք յարութեան:
- աձ 19 Երկուշրթ. սրբոյն Սարգսի և որդւոյն Մարտիրոսի, և չորեքտասան զինա. և Ատոմեանց զօրավարաց:
- ակ 20 Երեքշրթ. սրբոց Սուքիասեանց: Հրց. աձ. Ըղբեզարդար:
- դձ 25 Միջին Կիրակէն, Հմբ. դձ. զՅարութիւն: (Տես ըստ կարգին յառաջին հատորն մինչև է վարդապետն պահելով զկարգ տեղոցն):
- դկ 1 Բուն բարիկենդանի Կիրակէն:
- գձ 14 Պահոց երկրորդ շաբաթի օրն Տեառն ընդ առաջ է:
- բկ 21 Երրորդ շաբաթի օրն, տօն է սրբոց Կիրղեանց հայրապետացն, և մօրն Աննայի, և սրբոց հայրապետացն Յօհաննու Երսղմայ. Յօհաննու Օձնեցւոյն, Յօհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն:

Փետ

	Մայրս		
աձ	22	Ձատիկ կիւրակէ: (օր Յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ):	
աձ	7	Յետ աշխարհամատրան կիւրակէի երեքշաբաթի օրն, տօն է Աւետեաց սուրբ Կուսին Մարիամոն:	
դկ	30	Հինգշբթ. օր Համբարձմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի յերկինս: (Տես ըստ Կարգին յառաջին Էսպարն):	Մայիս
ակ	10	Կիւրակէ գալստեան Հոգւոյն սրբոյ:	
աձ	17	Առաջին կիւրակէ. սկիզբն յարութեան կիւրակէից: Հրց. աձ. Որ եկիր ի փրկութիւն: (Տես ըստ Կարգին յառաջին Էսպարն):	Յուլ
բձ	28	Վարդավառի կիւրակէն: (Միջոց ուտիքն վեց շաբաթ է): (Տես ըստ Կարգին յառաջին Էսպարն):	Յուլ
ակ	5	Երկրորդ կիւրակէ. Հրց. բձ. Որ ի յերկնից:	
բձ	6	Երկուշբթ. սրբոցն Կիպրիանոսի եպիսկոպոսին և քառասուն և հինգ վկայիցն. և սրբոց կուսանացն Յուստինեայ, Եւփիմեայ և Քրիստինեայ: Հրց. բկ. Օրհնեմք գքեզ Տէր:	
բկ	7	Երեքշբթ. սրբոցն Աթանազիանեայ եպիսկոպոսին, և տասն աշակերտացն, և հինգ վկայիցն: Հրց. բկ. Որք ի մարտի:	
գձ	8	Չորեքշբթ. Հրց. ակ. Փառաւորեալ յաւիտեան Աստուած:	
գկ	9	Հինգշբթ. սրբոց նախահարցն Ադամայ և այլն:	
դկ	11	Շբթ. սրբոց Որդւոց և Թոռանց սրբոյ Լուսաւորչին մերոյ:	
աձ	12	Երրորդ կիւրակէ: Հրց. բձ. Անապական:	
ակ	13	Երկուշբթ. Մակարայեցւոցն: Հրց. գձ. Որք զտանջանս:	

բձ	14	Երեքշբթ. Երկոտասան մարգարէիցն:	
գձ	16	Հինշբթ. սրբոցն Սոփիայ, Էլն: Հրց. դձ. Յուսացեալքն:	
դձ	18	Շաբաթ. Պետրոսի Հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Աբիսողոմայ սարկաւազին:	
դկ	19	Չորրորդ կիւրակէ. Հրց. բկ. Որ յերկնային:	
աձ	20	Երկուշբթ. սրբոյն Անտօնի ճգնաւորին:	
ակ	21	Երեքշբթ. սրբոյն Թէոդորոսի թագաւորին և մանկանցն Եփեսոսի:	
բկ	23	Հինգշբթ. սրբոցն Կիրակոսի և Յօղիտայի. Հրց. դձ. Սուրբ էս Տէր:	
գկ	25	Շաբաթ. Աթանասի և Կիւրղի Հայրապետացն:	
դձ	26	Հինգերորդ կիւրակէ. Հրց. բկ. Անսկիզբն. Հմբ. դձ. Կանանցն կանխելով:	
դկ	27	Երկուշբթ. սրբոցն Վահանայ, Գորգիոսի, և այլն: Հրց. դկ. Առ քեզ Աստուած:	
աձ	28	Երեքշբթ. սրբոցն Տրիփոնի, Պարսամայ և Ռնոփրիոսի ճգնաւորացն:	
բձ	30	Հինգշբթ. Եւզինեայ կուսին. և հօրն նորա Փիլիպպոսի. և այլն: Հրց. դկ. Որ զհրաշափառ:	Օգոս.
գձ	1	Շաբաթ. սրբոյն Գրիգորի աստուածաբանին:	
գկ	2	Վեցերորդ կիւրակէ. Հրց. դձ. Փառաւորեմք: Հմբ. դկ. Չաստուածային զգերեզ:	
դձ	3	Երկուշբթ. Եւզինէոսի, Մարկարիոսի, և այլն: Հրց. աձ. Չքեզ արգար: (Ներոյ երեւոյր զհնէ Ա Կոստանտին ի ըրբոր շաբաթն Կես յԱ. Էսպարն):	
գկ	4	Երեքշբթ. Անդրէի զօրավարին, և այլն:	
աձ	5	Չորեքշբթ. Հրց. ապց. բձ. Որ ահաւոր քոյով:	
ակ	6	Հինգշբթ. Անդրիանոսի, և կնոջն, և այլն: Հրց. ակ. Սուրբ Աստուած:	
բկ	8	Շաբաթ. Եփեսոսի սուրբ ժողովոյն, երկու հարիւր Հայրապետացն:	
գձ	9	Եօթներորդ կիւրակէ: Հրց. գձ. Փառաւորեալ որդի Աստուծոյ: Հմբ. դձ. Իւզաբեր. և Այսօր յարութիւն: (Բարեկենդան Աստուածածնի պահոցն):	

820

0097575

820

<< Ազգային գրադարան



NL0027575

